

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

ԵՐԿՈՒ ԴԱՐԱԴԱՐՁ ԱԶԳԱՅԻՆ ՅԻՇԱՏԱԿԻ

ԳԱԼԻ ՏԱՐԻՈՅ (1873)

Տագնապ բամանակի, մանուկ երբ դիւ-
րահադորդութիւն կայ գիւղումս և կարծեաց՝
աւելի կը դրդուին հասարակաց միտքը, և կը դար-
ձնեն յանստոյգ ներկայէս յանստուգադոյն ա-
պագայն: Թողով զօտար ազգս, մերս ալ իր ոչ
աննշան գրիւք՝ թէ ըստ քաղաքականի և թէ ըստ
կրօնականի, ոչ է յետին այն ժողովրդոց մէջ՝ որք
ատենէ մը վեր աւելի արթնութեամբ փափագին
իրենք զիրենք ճանչնալ և ճանչցնել, և լաւագոյն
ապագայ մ'ունենալ: Դարուս գէթ վերջին քա-
ռորդին մէջ՝ որչափ ջանք և գործք եղած են մեր
մէջ՝ դիւրաւ կրնամք յիշել. և յուշարար լրագիրք
արդէն պէտք եղածը (և երբեմն չեղածն ալ) չեն
լռեր. և եթէ զասոնք համարինք թարգման ազ-
գային զգացման՝ կը հարկաւորիմք ըսել թէ աւելի
տոգոհ է սա քան թէ գոհ՝ իր ըրած յառաջագի-
մութեան չափուն: Այլ գուցէ շատ աւելի ալ
չէր կրնար պահանջուիլ նկատմամբ իր քաղա-
քական վիճակին. որոյ փոփոխութիւնն աւելի
օտարաց ձեռք է քան թէ իր, և ուսումնական
վիճակի՝ որ շատ շուտով չի կրնար ընդարձակել
իր ճառագայթները ամեն կողմ: Թողումք զկրօնա-
կան վիճակը, որ շատ փափուկ կամ փշոտ ըլլալով
շատ ալ զգուշութիւն պէտք է շօշափելու: Առանց
մեծ իմն և յանկարծ յեղափոխութեան՝ ի հարկէ
այսպիսի դիրք ունող ազգ մը՝ չի կրնար քիչ քայ-
լով երկայն ասպարէզ կտրել. և կը մնայ որ իր
ներքին ուժով, մտաւոր ջանքով, խաղաղական
ոգւով՝ հանգերձէ զապագայն:

Ապագայի լաւութեան կամ պատրաստութեան
համար՝ անհրաժեշտ կարեւոր է տեսութիւն ոչ
միայն ներկայիս՝ այլ և անցելոյն. և շատերն, մա-
նուկ մեզի պէս հին ազգք, եթէ աչք մը յա-
ռաջ ձգեն՝ երկու ալ յետ դարձնեն, իրենց հին,
հարուստ և առոյգ անցելոյն վրայ, փափագելով
կերպով մը կապակցել զայն ընդ հանգերձելոյն:
Արծեմք թէ այս է մերազգեաց ջանքն ալ. և թէ և
դժբաղդաբար զանազան բաժանմունք և խումբք
կան մէջը, այլ գրեթէ ամենքն ալ այսպիսի գիտ-
մունք ունին. թէպէտ ոմանք կակուղ, ոմանք կար-
ծըր կապելով, ոմանք գուցէ քիչ մ'երեւակա-
յեալ ծաղկահիւս նարօտներով, ոմանք ալ փառ-
տած և պաղած պարաւանդներով՝ կ'ուզեն կապել
զհին ընդ նորոյն: Մեր աչքն և սիրտն ալ անբա-
ժան է յանցելոյն և յապագայէն. և փափաքիմք
մեր տկար ճգամք ալ այն երկուքին մէջ հանգոյց
մը ձգել. խաղաղական կապ մը. — զարագարձ

Յիշատակ մը. — Թողով ընթերցողաց՝ դատելու
և գտնելու մեր ընտրութիւնը: Ստէպ կը տես-
նեմք նոր ատեններս զանազան ժողովուրդներ,
քաղաքներ և ընկերութիւններ, որ իրենց զար-
գացման և մտաւոր արծարծման կարեւոր, հզօր,
միանգամայն և հանդարտ և սիրելի հնարք մ'ալ
գտեր և կ'ընեն՝ այս Յիշատակաց նորոգութիւնը,
և քան զամեն հանգէս մեծապայծառ կատարեն.
մանաւանդ այնպիսի անձանց՝ զարագարձները և
յորեւեանները՝ որք գործով և մտածութեամբ՝
օգտակար և պարծանք եղած են հայրենեաց և
մարդկութեան:

Ահա այսպիսի անձանց զուգի մը մահուան դա-
րագարձը կը մօտեցնէ մեզի յաջորդ տարին,
1873, յազգային յիշատակաց տուամարի: Զայգ
մը՝ նման անուամբ և արդեամբ և վիճակաւ. մե-
կուն ԺԶ դարագարձը, միւսոյն Ը. մեկն վախճա-
նեալ ըլլալով յամի 373, միւսն ի 1173: Երկուքն
ալ հայրապետք, համացեղք՝ Պահլաւունիք, և
համանունեք՝ Ներսէսք, Ա. և Դ. ի կարգի կաթո-
ղիկոսաց. Մեծ և Պարբն անուանեալն, և Շահալի
ու Կալեռի անուանեալն. որք գրեթէ և նոյնչափ
ժամանակ աթոռակալած են, իբրեւ ութ տարի.
և դարձեալ, գրեթէ նոյն եղանակի տարւոյն վախճ-
անած են, Պարթևն՝ ի 25 յուլիսի, Կալեռի
յ'8 օգոստոսի. և կրնան այն օրերուն միջոց ա-
մառնային երկաթալծեայ բարեկենդան մը պար-
գեւել մեզի ի կատարումն իրենց բազմադարեան
յիշատակաց. այնքան արժանաւոր և անմոռա-
նալի յիշատակաց:

Մեծն և Պարթևն Ներսէս իր պանծալի դա-
րուն և աթոռակցաց մէջ, ոչ միայն մեզի համար
ամենէն նշանաւորաց մէկն է, այլ և առաջի համ-
օրէն քաղաքական և եկեղեցական քննողաց. ա-
մենէն երեւելի Հարց ժամանակակից և քան ըզ-
շատս երիցագոյն. ամենէն զօրաւոր կերպարա-
նաց մէկն, գուցէ այսու և վեհագոյն քան զամե-
նեամբ. զի թէ նմանը փնտուեմք, ի ժամանակին
զարմանալի հանդիպութեամբ երբեմն մը կը գըտ-
նեմք երկրիս երեք մասանց վրայ. զԱթանաս յԱ-
փրիկէ, որ իր երկայն շրջանը մերինին կարճ
շրջանին հետ աւարտեց (2 մայիսի 373). Ամ-
բրոսիոս՝ յԱւրոպէ, որ ասոնց արեւը մանեկէն
անմիջապէս ետեւ բարձրացաւ՝ յաթոռն Միլանու
(374), և Ներսէս՝ յԱսիա: Քաղաքական վար-
մամբ և յարաբերութեամբ ընդ թագաւորաց և
կայսերաց՝ նմանք գտան սոքա. և եկեղեցական
սրբաշուք վեհութիւնը՝ առանց տիրապետու-
թեան և ազահութեան ոգւոյ՝ բարձրացուցին ի
վերոյ տիեզերակալ թագաց և դաւազանաց. աշ-
խարհաց իշխողները յանդիմանեցին, յանձն առ-
նըլով զփոանգ կենաց. և եթէ երկուքն ազատե-
ցան այս վտանգէս՝ մերս Ներսէս իսպառ նախա-
տակեցաւ. — և երանի՜ թէ յայտնի սրով ալ ըլլար՝
քան պիղծ Պապայ մը գաղտնի մահադիւղով: —
Այսպիսի ոգւով և կապարածիւ գերազանցէ մերս
Ներսէս, ինչպէս անոնք ալ քան զսա՝ մտաւոր
երկասիրութեամբք. Աթանաս և Ամբրոսիոս գե-
ղեցիկ գրողք են, Ներսէս գեղեցիկ և զօրաւոր
գործող. սակայն նոքա ոչ այնքան թերթեր գրե-
ցին, որքան մերս՝ հիւանդաց, պանդրկոտաց, ճա-
նապարհորդաց և առանձնասիրաց համար ապառ-
տաններ կանգնեց. զի աւելի քան զ'2000 կ'ըսուին

իր շինած բարերարութեան տեղումներն, քանի մը տարի հայրապետութեանը միջոց¹ :

Այսպիսի կոչմամբ և իրօք Մեծ հայրապետի անհատական կերպարանքը ներկայացընել այս առեւն ոչ միայն դժար է վասն հեռավորութեան դարուց և փոփոխման գիպաց, այլ նոյն պատճառաւ և ոչ այնքան յարմար մեր այժմեան հանգամանաց և վիճակի. և վախճմոր եթէ յանկարծ նորէն յառնէր այնպիսի անձն՝ շատ տարակոյս կը հասներ մեր բարձրաստիճան գլխաւորաց: Պարտ և արժան է ամենայն սիրով և երախտեօք կատարել անոր բազմադարեան յիշատակը, ողջել իր մեծ սիրտը, որ եթէ գեռ կայ մնացորդ մը իր երբեմն բերնէն ելած անիծից՝ ի վերայ ապերախտ Արշակունիաց, և անկէ ցայտեր են կաթիլներ ի վերայ Ժողովրդեան, բոլորովին ջնջէ զայն հիմայ՝ որ իր մահուան երեք հինգհարիւրեակ շրջաններն անցնելով նոր դար մը կը սկսինք. և թափէ տառուածային օրհնութեանց ծովանման բաժակ մը զինքը յիշողաց և յիշելու պարտականաց վրայ. ըծակցի իրմէ 800 տարի վերջը իրեն հաւասարած անուա, նակցին, ազգակցին, աթոռակցին և գործակցին հետ. ինքն իր հրեղէն լեզուն, Շնորհալին ալ իր անուշակ շրթունքը շարժելով բարեխօս ըլլան վասն կարօտեալ ազգիս:

Յոգքինա՝ որպէս քիչ շատ յայտ է ազգայնոց, որբութեամբ և վերոյիշեալ գիպօք այնքան նման Աւաջնոյն, հոգւոյ շարժմամբ կամ բարութեամբ՝ տարբերէր. որչափ որ անոր վրայ ոյժ և սաստկութիւն մը կ'ըմբռնուի, այնքան ալ ասոր վրայ քաղցրութիւն և հեղութիւն վկայուի. որքան անոր հայրութեան մէջ՝ պետութիւն մ'ալ խառնուած է, ասոր ալ հայրութեան մէջ, եթէ ներելի է ըսել, մայրական գորով և փափկութիւն մը. որով սուելի համարձակ կրնամք գիմել առ սա՛ տա որ և ժամանակաւ աւելի մօտ եմք, քան թէ նա իր Նախնոյն. մեր այժմու վիճակն շատ աւելի նման է Վրայեցւոյն ժամանակակից ժի գարու ազգակցացս՝ քան թէ Պարթևին ժամանակակից Պ գարու Հայ-Արշակունի ինքնազուլ ազգայնոց: Իր բազմապատիկ գրաւորական արգասեօք և եկեղեցական կարգաւորութեամբքը՝ Շնորհալին շատ աւելի մերձաւոր կարծուի մեզի՝ քան որչափ որ կրնար հեռացընել 700 տարուան միջոց մը. և անդադար կը լսեցնէ իր հոգևոր և գրաւոր ձայնը մեր եկեղեցեաց և վարժարանաց մէջ: Ո՛ր, չափ ինչ պարտական եմք Ա Ներսիսի, չեմք գիտեր ստուգել, և գուցէ չեմք ալ կրնար լաւ գիտնալ. իսկ Ռին որչափ պարտիմք՝ աւելի գիտեմք, կրնամք և պէտք է գիտնալ: Ո՛ր և է ազգ որ բաղդ ունենար այս հայրապետները իրեն սեփականելու՝ շատ մեծ պանծանք պիտի հռչակէր անոնց գարագարձ յիշատակն ալ. կը մնայ մեզի Հայոցս ալ մեր զգացման չափը յայտնել երկնից և երկրի:

¹ Յիշեմք հօս ալ որ մեր նախնիք, սկսեալ ի Մ. Խոսրոսացւոյ, և զաւանդագիրք՝ Ս. Ներսիսի Պարթևի 34 տարի կու տան հայրապետութեան, որ չէր աւելի քան ութ կամ ինն տարի. յայտնի է իր մահուան տարին. եթէ 34 տարի կաթողիկոս եղած ըլլար՝ հարկ էր որ 340ին նշտած ըլլար, և իբր 315ի ալ ծնած, Խոսաւորչի և Տրդատայ ծաղկած օրերը. որով բոլոր պատմութիւններս ալ կը խանգարէր: Հաւանօրէն Ներսէս 34 տարի միայն ապրած է:

Այսպիսի մտածութեամբք արժան համարեցանք՝ թէ ոչ երկու մեծ Ներսէս հայրապետացս՝ գոնէ վերջինին վարքը աւելի ծանօթացընել մերայոց, մեր ձեռքը հասած յիշատակներէն և իր գրուածքներէն լոյս առնելով. որպէս զի նախ մենք ալ մեր կողմանէ երախտեաց քաղցր պարտք մը կատարած ըլլամք, (անշուշտ աւելի յօժարութեամբ քան թէ արժանաւորութեամբ), և ապա՝ ուրիշներու ալ գիւրեմք երախտեաց և յիշատակաց ճամբայն: Այլ ստոյգը խոստովանելով, ոչ այնքան սարեկանի յիշատակ և հանգէսն է զմեզ ներքուստ գրգռըն ի գրել, որքան փափագ մը այսպիսի արժանաւոր և յիշաւի Շնորհալի շնորհագեղ շնորհազել Անձ մը հռչակելու, և յորդոր ըլլալու ի գիմել ուխտիւք առ նա, յայսպիսի ապաշնորհ և ապաշուք ժամանակիս. Անձ մը՝ յորմէ շատ անձինք և ամենքն իսկ կրնան իրենց վիճակին յարմար օրինակ և լոյս առնուլ: Եթէ այս երկու պատճառացս վրայ երրորդ մ'ալ կայ, այն՝ աւելի անձնական է. — մօտ առնենք ուս ընդհանուր և մասնաւոր եկեղեցական դէպք՝ ոչ սակաւ տիեզեցուցին մեր միտքն ալ, և պահ մը անցելոց յիշատակաւ ստիպեցին վարագուրել զնեղայս, կամ մեզի պէս կարօտողաց՝ միւլթարանք մը ճարել յանցելոյն. — և մինչ իբրև հասարակաց կիրք մը գործէր էր հայրապետ փնտռել, գտնել, և գտալի, և այլն, մենք ալ մեր առանձնական սահմանաւ խնդրեցինք, գտանք, գտնեցինք, և ահա՛ առիթ ընծայեմք բարեմիտ ընդունողաց մեր Հայրապետը, և մեր գործը, Շնորհալի եւ Պարագայ Խոր: Այսպէս անուանեցինք, վասն զի մեր ընտրեալ ըլլաւ ճանցընելու համար՝ սովորական կենսագրութեան ոճէն աւելի ընդարձակել հարկ էր պատմութիւնը. մանաւանդ որ Ներսէս ի թէ եկեղեցական, թէ քաղաքական և թէ գրաւորական կերպարաններն ունի. թէ իր և թէ օտար ուղղաց հետ յարաբերութիւն ունեցեր է, ընդ լատինաց, Յունաց և Ասորոց, որոց սահմանակցութե մէջ բնակեցաւ միշտ. պէտք էր որ պատմական շրջանն ալ թէ ըստ աշխարհագրական և թէ ըստ ժամանակագրական սահմանաց՝ աւելի հեռու քշուէր. սակայն խիստ շատ ալ ընդարձակել չուզելով՝ չուզեցինք ժամանակ Շնորհալի ըսել, որ աւելի լայն իմաստ ունի և շատ հեռուներ կըրնար տանիլ զմեզ, այլ Պարագայ, որ իր չորս կողմը չափաւոր սահման մը կը նշանակէ, և այսպէս կ'իմանամք մենք. և յուսամք այլեւայլ ստոյգ յիշատակօք հաճեցընել զհայասէրս:

Կարեւոր համարիմ խօսք մ'ալ աւելցընել ընթերցողաց կամ քննողաց: Մեր ներկայացընելի անձն՝ բարձրագոյն աստիճանի (ամեն կերպով իմանալով) եկեղեցական անձ մ'է. իսկ մեր նպատակն չէ իբրև եկեղեցական միայն և եկեղեցականաց օրինակ ընծայեցընել զնա. այլ որպէս և էն՝ շատ բանի և շատոնց օրինակ, իբրև բարեպաշտ, զգօն, գրագէտ, հանձարեղ, աշխատասէր, հեզ, խաղաղարար, միաբանիչ, և այլն, անձ մը: Կարեւոր համարիմ, ըսի, վասն զի կը տեսնենք թէ որչափ պրկուած և ցցուած են հիմայ կրօնական ջիւղ ցաղքիս և յայլս. և որքան գիւրաւ կըրնար կարծուիլ թէ գրողս ալ վարպետութեան կամ համոզողութեան կամ լաւ ևս ըսել՝ կողմնակցութե մը գիտմունք ունի: — Փափագս է պար-

զապէս պատմել արժանաւոր անձի մը և ժամանակի գէպքեր, ընթերցողաց թողով զհամոզումը. թէ և միշտ մեծագոյն փոփոխութիւններ և օգուտը, նաև ի չմիաբանելն կարծես. — զայս ալ ստիպուիմ ըսելու, տեսնելով թէ ինչպէս որ և է անձանց խօսք և խօսքէ վեր բաներ անգամ՝ բաւական չեն ի համոզել զմիտս. — միայն երկնաւոր անապակ սիրունակ շնորհքն է շահիչ սրտից և գերիշ մտաց: Վասն որոյ և Շնորհաւոր մը վարք ընտրեցինք՝ մեզի զբաղանք ի ժանեւոր ժամանակիս, նմանակցացս կամ կարեկցաց՝ սփոփանք, և հասարակաց պիտանի զարմանք:

Յետ մեր միտքը յայտնելու՝ կը յուսամք որ ներդրամիտ ըլլան ընթերցողք՝ եթէ ի վերայ այս ամենայնի աւանդ ծանր կամ ծուռ բան մ'ըսած ըլլանք. մանաւանդ եթէ կրօնական ինքզրոյ մը վրայօք ըլլայ այս, հիմկուց յայտնեմք՝ որ կրօնական բարձրագոյն դատաստանին կ'ուզեմք միշտ հպատակել. թողով ուրիշ խնդիրները՝ իւրաքանչիւր կամաց և քմաց:

ՀԱՅԻ ՊԱՏԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԴ

ՆԱՄԱԿ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՌԻԹԵՐՈՐԴ

(Տես երես 125:)

Անշուշտ եմ որ մեծ անձկութեան մէջ իյնալու էիր, եթէ նախաճաշը ընելու համար հարկ ըլլար Սէնին խորը երթայիր. անկարելի էր թէ պատուաւ կ'լլէիր և ջուրը քթէդ ներս չհոսէր: Զիագետին աւտոր նկատմամբ անհանգիստ ըլլալու բան մը չունի: Ռեգանց մտից առջև երկու դուռ տրուած է իրեն, զորոնք ըստ կամս կրնայ գոցել, և որոնց ետևը՝ մինչդեռ ջրին մէջ կ'երթանք իր թռքերը շատ հանգիստ կը մնան: Հիմա բուսաբանական պարտէզը ձիագետի մը կայ. գնա՛ այն կողմերը պարտելու. խոշոր փոր մը կը տեսնես որ գրեթէ գետինը քսուելով կը քալէ, և շատ զարմանալու չէ. շատ տեղոյ պէտք կար այն պրտունները, այն եղէգները, և գետոց յատակի խոտերը զետեղելու, որ շատ սննդարար չեն: Ուստի նաև ձիա-

գետինն ստամոքսը ոչ միայն երկու բաժանմանց երկոյթն ունի, ինչպէս բուն ձիունը, այլ նաև կարծես թէ երեք կամ չորս հատ ունի: Զիագետին վրայ խօսքս լմնցընել ուզելով, այս ալըսեմ՝ որ իր ատամանց փղոսկրը շատ աւելի գեղեցիկ է քան զփղին ժանեացը, անոր համար ալ ատամնայարդարը անոնցմով գեղեցիկ ակռաներ կը շինեն անոնց համար՝ որ իրենց արուեստին կը դիմեն: Այս բանս ալ քեզի շատ հարկաւոր չէ. բայց չգիտցուի թէ ինչ բան կրնայ հանդիպիլ. նայէ որ երբեք ձիագետի ալուայ չառնուս. շատ շուտ կը գեղնին, որով անոնց տուած գեղեցկութիւնը ստրկին զոհին համեմատ չէ:

Կ'ուզէի քանի որ հսկայ կենդանեաց վրայ է խօսքը՝ ռեգեղիւրին վրայ ալ խօսիլ քեզի. սակայն անշահ նիւթ մըն է: Շնատամն չունի, երբեմն ալ հերձատամէ զուրկ է, մերթ ալ ըստ վկայելոյ բնապատմից և ըստ տեսակաց՝ մինչև երեսունուվեց ակռայ ունի. և ահա այսչափ է ըսելիքս այդ խոշոր մնի զանգուածին նկատմամբ, որ որչափ արտաքուստ այլանդակ է, նոյնչափ կանոնաւոր է ներքուստ: Այս կենդանին է ահա որ զլիաւորապէս թանձրամորթ անունը կրելու արժանի է, իր մորթն այնչափ թանձր ու կարծր է, որ հրազիւնուց գնտակները վրայէն կը սահին: Սակայն այս բանս հիմա մեր խօսքին նիւթ ըլլալու չէ, ինչպէս և ոչ քթին վրայ ունեցած եղջիւրը. հապա օր մը եթէ մորթին և անոր հետ շաղկապ ունեցող բաներու վրայ խօսելու ըլլամք քեզի, ան ատեն ասոնց կարգն ալ գուցէ կու գայ:

Խօղը շնատամունք ունի, և շատ ամուր շնատամունք. սակայն իր վարազ կոչուած վայրենի վիճակին մէջ է, որ այս ակռաներս իրենց իրական ձևովը կը տեսնուին: Վասն զի այն ատեն այն ակռաներն բերնէն զուրս կը ցցուին ու կոր ձև մը կ'առնուն, որովհետեւ թանձրամորթից մէջ այս բանս բաւականապէս ընդհանուր է. և ահա ասոնց վրայ կը կայանան այն սրածայր ու հատու-